ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք, հասցե Կոտայքի մարզ,գյուղ Քաղսի 6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս 077-077-250, էլ. Փոստ qaxsi.kotayk@mail.ru

27.05 2016թ.

N 031-80

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի, Ձեզ է ուղարկվում Կոտայքի մարզի Քաղսի համայնքի ավագանու 2016թ. մայիսի 27-ի թիվ 6 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 2 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի
6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս՝ 077-077-250, էլ. Փոստ՝qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ու Մ

**«27» մայիսի 2016թվականի N 28 -Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով,

համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ու Մ Է՝

Հաստատել Քաղսի համայնքի ավագանու 2016թվականի մայիսի 27-ի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը՝

1. «Հայքրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին.

*Կողմ 5* *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

*Ավագանու անդամներ՝*

1. Գրիգորյան Մանվել
2. Դավթյան Գևորգ
3. Խուրշուդյան Գևորգ
4. Պետրոսյան Օնիկ
5. Ենոքյան Էդիկ

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի
6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս՝ 077-077-250, էլ. Փոստ qaxsi.kotayk@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

**«27 » մայիսի 2016թվականի N 29**

## «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 1851-Ն որոշման, ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ գույքերը սեփականության իրավունքով անհատույց հանձնել **«Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը:**

2. **Գույքի գտնվելու վայրն է՝** Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Քաղսի համայնք,

1) **Գույքի ծածկագիրն է՝ 007.063. N 2638229 տրված 2010թվականի նոյեմբերի 12-ին**
**Գույքի մակերեսը՝ 6404,52 գծմ 0.1681հա**
**Գույքի նպատակային նշանակությունը՝** էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների /խմելու ջրի ջրատար/
**Հողամասի գործառնական նշանակությունը.** կոմունալ օբյեկտների

2) **Գույքի ծածկագիրն է՝ 007.063.218.003**
**Գույքի մակերեսը՝ պոմպակայան -32,08 քառ.մ, էլ.ենթակայան -18,59 քառ.մ, ջրամբար-10,0 քառ.մ, 0.5143հա**
**Գույքի նպատակային նշանակությունը՝** էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների
**Հողամասի գործառնական նշանակությունը.** կոմունալ ենթակառուցվածքների

3) **Գույքի ծածկագիրն է՝04.09.2012-07-0277 ՕԿՋ 86.8քմ**
**Գույքի մակերեսը՝ 0.14961հա հող**
**Գույքի նպատակային նշանակությունը՝** էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների
**Հողամասի գործառնական նշանակությունը.** կոմունալ ենթակառուցվածքների

*Կողմ 5* *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

*Ավագանու անդամներ՝*

1. Գրիգորյան Մանվել
2. Դավթյան Գևորգ
3. Խուրշուդյան Գևորգ
4. Պետրոսյան Օնիկ
5. Ենոքյան Էռիկ

Համայնքի ղեկավար՝ Ս.Ալեքսանյան